ՀՏԴ 316.334:796 DOI: 10.53068/25792997-2025.2.15-170

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԳԵՆԵԶԻՍԸ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԻՃԱԿԸ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա.Վ. Պողոսյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սպորտային ընտրություն, տաղանդների բացահայտում, մարզիկների սելեկցիա, ժամանակակից մոտեցումներ, գենեզիս, հիմնախնդիրներ սպորտում:

Հետազոտության արդիականություն: Սպորտում նախնական ընտրության հիմնախնդիրները միշտ եղել են գիտական հետազոտությունների և գործնական գործունեության կենտրոնում: Դրանք պայմանավորված են նրանով, որ արդյունավետ և օբյեկտիվ ընտրությունը մարզական պատրաստության ամբողջ համակարգի հիմքն է [5,7]: Դեռևս XX դարի կեսերից սկսած՝ ԽՍՀՄ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում ստեղծվել են տարբեր մոդելներ՝ մարզիկների ընտրության և սելեկցիայի համար [1,4]:

Չնայած մասնագիտական կողմնորոշման ոլորտում ընտրության գործընթացի ուսումնասիրությունն ունի բազմամյա գիտական ավանդույթ, սպորտի ոլորտում այդ խնդիրը ակադեմիական ճանաչում ստացավ համեմատաբար ուշ՝ միայն 1966 թվականից սկսած: Սա վկայում է, որ մինչ այդ մարզիկների ընտրությունն իրականացվում էր հիմնականում էմպիրիկ մեթոդներով՝ առանց բավարար գիտական վերլուծության և համակարգված մոտեցման: Ինտեգրված մոտեցումների փուլում, երբ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ֆիզիկական ցուցանիշները, այլև հոգեբանական, սոցիալ-մշակութային և գենետիկ գործոնները, սպորտում ընտրության պրոցեսը ավելի է պահանջում գիտահիմն և համապարփակ մոտեցում [2]:

Բիկովը և Դենիսովը ընդգծում են, որ ժամանակակից սպորտում ընտրության գործընթացի արդյունավետությունը հիմնված է գիտական մեթոդների ճիշտ կիրառման, տվյալների խորը վերլուծության և մարզիկների անհատական առանձնահատկությունների համապարփակ գնահատման վրա: Նրանց կարծիքով՝ սպորտային ընտրության կատարելագործման համար անհրաժեշտ է համատեղել ֆիզիկական, տեխնիկական, հոգեբանական և սոցիալ-

մշակութային ցուցանիշները գնահատող համակարգերը, ինչպես նաև կիրառել թվային տեխնոլոգիաներ և բազմաչափ մոնիտորինգ՝ առավել տաղանդավոր մարզիկների հայտնաբերման նպատակով [3]:

Վերջին տարիներին սպորտային ընտրության ոլորտում մեծ ուշադրություն է դարձվել գիտական մեթոդների ինտեգրմանը՝ նպաստելով մարզիկների հնարավորությունների ավելի խորը և բազմաչափ գնահատմանը: Վայենսը և գործընկերները ընդգծում են, որ ֆիզիկական, հոգեբանական և տեխնիկական հմտությունների համատեղ կիրառումը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ և ամբողջական գնահատել մարզիկի պոտենցիալը [11]: Ներկայիս ժամանակակից տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ արհեստական ինտելեկտը ¥AI¤ և մեծ տվյալների՝ (Big Data) բազմաթիվ ֆիզիկական, հոգեբանական, տեխնիկական և գենետիկական ցուցանիշների համալիր վերլուծությունը, հատկապես կարևոր են մարզիկների ընտրության գործընթացում: Սմիթը և Ջոնսը փաստում են, որ AI մոդելները զգալիորեն բարձրացնում են տաղանդների հայտնաբերման ճշգրտությունը՝ մշակելով բազմաչափ տվյալների համալիր վերլուծություն [10]:

Բացի այդ, գենետիկական հետազոտությունների կիրառումը սպորտում շարունակում է զարգանալ՝ բացահայտելով ֆիզիկական հարմարվողականության և վնասվածքների ռիսկի գենետիկ հիմքերը: Լոպեզը և գործընկերները ցույց են տվել, որ գենետիկական պրոֆիլավորումը հնարավորություն է տալիս մշակել անհատականացված մարզումների ծրագրեր՝ հիմնված մարզիկի գենետիկական առանձնահատկությունների վերլուծության վրա [9]: Հոգեբանական և սոցիալական գործոններն էլ են կարևոր ազդեցություն ունենում մարզիկների ընտրության գործընթացում: Կիմ և Պարկը ընդգծում են, որ հոգեբանական թեստավորումն ու սոցիալական միջավայրի վերլուծությունը անհրաժեշտ է ընդգրկել համալիր գնահատման մոդելներում՝ ապահովելու մարզիկների ամբողջական պատրաստվածությունը [8]:

Հայաստանում մարզիկների ընտրության հիմնախնդիրները շարունակում են արդիական մնալ: Չնայած որոշ մարզաձևերում, հատկապես լողում և բռնցքամարտում, մարմնամարզությունում, սեղանի թենիսում առկա են որոշ գիտական հետազոտություններ՝ վերաբերող սպորտային ընտրությանը, սակայն համակարգված միասնական գիտական հիմքով կազմված ընտրության մոտեցումներ առայժմ չկան, որոնք հիմք կհանդիսանան կոնկրետ մարզաձևում մշակելու ընտրության մոտեցումներ [6]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և բիոմեխանիկական, ֆիզիոլոգիական, բժշկակենսաբանական և այլ մեթոդների սահմանափակ կիրառությունը բարդացնում է տվյալների համալիր վերլուծությունը և տաղանդների բացահայտման սահմանափակ կիրառությունը բարդացնում է տվյալների հստակ վերլուծությունը և տաղանդների բացահայտման արդյունավետությունը [11]:

Այս առումով արդիական է վերանայել և վերլուծել մարզիկների ընտրության համակարգի **գենեզիսը**, ուսումնասիրել ժամանակակից վիճակը և ներկայացնել հետագա զարգացման հեռանկարները՝ հիմնվելով միջազգային լավագույն պրակտիկաների վրա, քանի որ Հայաստանի փորձի վերաբերյալ հրապարակված հետազոտություններ և պաշտոնական տվյալներ առայժմ բացակայում են:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ վերլուծել սպորտում մարզիկների ընտրության համակարգի ձևավորման և զարգացման փուլերը, բացահայտել դրա արդի վիճակի առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Վերլուծել մարզիկների ընտրության համակարգի պատմական զարգացման փուլերը և հիմնական տեսական մոտեցումները:

2. Բնութագրել ժամանակակից սպորտում ընտրության գործընթացի առանձնահատկությունները՝ հաշվի առնելով ֆիզիկական, տեխնիկական, հոգեբանական և սոցիալ-մշակութային գործոնները:

3. Համեմատել ազգային և միջազգային փորձը՝ բացահայտելով առավել արդյունավետ մոդելները և գործիքակազմը:

4. Առաջարկել մարզիկների ընտրության համակարգի կատարելագործման ուղղություններ՝ կիրառելով նորագույն գիտական մեթոդներ և թվային տեխնոլոգիաներ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են՝ **գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրություն, համեմատական վերլուծություն, փաստաթղթային և վիճակագրական տվյալների վերլուծություն:**

Հետազոտությունը կազմակերպվել է հետևյալ փուլերով.

1. Տեսական փուլ՝ հավաքագրվել, վերլուծվել և համակարգվել են ինչպես հայերեն, այնպես էլ միջազգային գիտական գրականություն, մեթոդական նյութեր և կիրառական ուղեցույցներ:

2. Վերլուծական փուլ՝ կատարվել է ոլորտային տվյալների համադրություն և համեմատական վերլուծություն՝ Հայաստանի և մի շարք երկրների փորձի միջև, առանձնացվել են հիմնական

խնդիրները, մարտահրավերներն ու զարգացման հնարավորությունները:

3. Ամփոփիչ փուլում՝ ուսումնասիրված տվյալների և միջազգային փորձի համադրության հիման վրա ձևակերպվել կամ մշակվել են գիտական և գործնական եզրակացություններ, որոնք արտացոլում են սպորտային ընտրության հիմնախնդիրների առանձնահատկությունները Հայաստանի սպորտային կառավարման համակարգում և առաջարկում բարելավման ուղիներ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սպորտային ընտրության համակարգերի զարգացումը սկսվել է XX դարի կեսերից՝ հիմնականում ԽՍՀՄ-ում և Արևմտյան Եվրոպայում, որտեղ առաջին անգամ համակարգված կիրառվել են Ֆիզիկական պատրաստվածության թեստեր, շարժողական ընդունակությունների գնահատման մեթոդներ և բիոմետրիկ ցուցանիշների վերլուծություն՝ մարզիկների ընտրությունն ու տաղանդների բացահայտումը օպտիմալացնելու համար [4,13]: Այդ շրջանում ընտրությունը հիմնականում հիմնված էր ֆիզիկական տվյալների և շարժողական ընդունակությունների վրա՝ առանց հոգեբանական և սոցիալական գործոնների մանրամասն ուսումնասիրման [7]:

Ժամանակակից սպորտային ընտրության համակարգերը ստանում են միջգիտակարգայնության բնույթ՝ ընդգրկելով ֆիզիոլոգիական չափումներ և ֆիզիկական ցուցանիշների վերլուծություն, սպորտային հոգեբանություն, գենետիկա, տվյալագիտություն և AI տեխնոլոգիաների կիրառում [12]: Օրինակ՝ Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում և Բելգիայում կիրառվում են բազմաչափ մոդելներ. սկզբնական ընտրության փուլում օգտագործվում են ֆիզիկական պատրաստության, շարժողական ընդունակությունների գնահատման և հոգեբանական թեստեր, իսկ հետագա մասնագիտացման փուլերում կատարվում է՝ տեխնիկատակտիկական վերլուծություն, մանրամասն հոգեբանական թեստավորում և շարժողական ընդունակությունների մշտադիտարկում [7,11]: Այս մոտեցումները հնարավորություն են տալիս բազմակողմանի և օբյեկտիվ գնահատել մարզիկների պոտենցիալը, կանխատեսել նրանց զարգացման հեռանկարները և հարմարեցնել մարզման ծրագրերը:

Առաջիկա տարիներին ակնկալվում է AI-ի և մեծածավալ (Big Data), բազմազան տվյալների ավելի լայն կիրառություն, ինչը կստեղծի ընտրության ինտեգրացված հարթակներ՝ ներառելով հոգեբանական, սոցիալական, կրթական և ֆիզիկական գործոնների համալիր վերլուծություն: Մարզիչների և

մասնագետների շարունակական վերապատրաստումը և միջազգային գիտական կենտրոնների հետ համագործակցությունը կխթանեն ընտրության մեթոդաբանությունների կատարելագործումը և դրանց տեղայնացումը [4,7,11]:

1-ին աղյուսակում ներկայացվում է սպորտային ընտրության համակարգերի էվոլյուցիոն զարգացումը՝ սկսած դրանց ձևավորման առաջին փուլերից մինչև ժամանակակից ու ապագայի հեռանկարները:

Սկզբնական շրջանում ընտրությունը հիմնականում հիմնված էին ֆիզիկական և շարժողական ընդունակությունների գնահատման վրա՝ առանց հոգեբանական և սոցիալական գործոնների ընդգրկման:

Աղյուսակ 1

Սպորտային ընտրության համակարգերի էվոլյուցիան և զարգացման հեռանկարները

Փուլ	Հիմնական բնութագրեր	Օրինակներ և կիրառվող մեթոդներ
Գենեզիս	Կազմակերպված ընտրության համակարգերի ձևավորում, ֆիզիկական և շարժողական թեստավորում	ԽՍՀՄ, Արևմտյան Եվրոպա, ֆիզիոլոգիական և շարժողական նախնական թեստեր
Ժամանակակից վիճակ	Միջգիտակարգայնություն՝ ներառյալ հոգեբանություն, գենետիկա, տվյալագիտություն, AI	Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ՝ բազմաչափ մեթոդներ
Հեռանկարներ	AI-ի և տվյալագիտության ընդլայնում, սոցիալական և հոգեբանական գործոնների ընդգրկում	Համատեղ միջազգային ծրագրեր, մարզիչների շարունակական վերապատրաստում

Ժամանակակից փուլում սպորտային ընտրության համակարգերը դարձան միջգիտակարգային՝ ներառելով հոգեբանական, գենետիկական և սոցիալական բաղադրիչներ՝ օգտագործելով տվյալագիտության և արհեստական ինտելեկտի (AI) արդիական տեխնոլոգիաներ, ինչը թույլ է տալիս օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել մարզիկի պոտենցիալը և զարգացման հնարավորությունները:

Ապագայի հեռանկարում ակնկալվում է արհեստական ինտելեկտի ¥AI¤ և մեծ տվյալների (Big Data) ավելի լայն կիրառություն՝ ստեղծելով ամբողջական և

ինտեգրացված ընտրության հարթակներ, որտեղ կարևոր դեր կխաղան նաև մարզիչների, բիոմեխանիկայի և այլ մասնագետների շարունակական վերապատրաստումը: Համագործակցությունները միջազգային գիտական կենտրոնների հետ կնպաստեն ընտրության մեթոդաբանությունների կատարելագործմանը և դրանց համահունչ տեղայնացմանը [4,7,11]:

Հայաստանի սպորտային ընտրության համակարգը, չնայած որոշ հաջողված անհատական գիտական հետազոտությունների, փորձերի և ավանդույթների առկայությանը որոշ մարզաձևերում, ընդհանուր առմամբ հիմնված է հիմնականում մարզիչների փորձի վրա և չունի միասնական, գիտականորեն հիմնավորված ռազմավարություն [1]: Ընտրության գործընթացներում հաճախ չեն կիրառվում ժամանակակից մեթոդաբանություններ, առաջադեմ տեխնոլոգիաների համալիր վերլուծություն, ինչը ստեղծում է մի շարք խնդիրներ՝

- Միասնական, գիտականորեն հիմնավորված կենտրոնացված ռազմավարության բացակայություն
- Գիտական թեստավորման և չափման համակարգերի սահմանափակ կիրառություն
- Մարզիչների և մարզագիտական մասնագետների համակարգված վերապատրաստման պակաս
- Համապարփակ ֆինանսավորման և միջոցների բացակայություն
- Տեխնոլոգիական գործիքների, տվյալագիտության և բիոմեխանիկայի մեթոդների սահմանափակ կիրառություն
- Սոցիալ-տնտեսական անհավասարություն, որը ազդում է մարզիկների ընտրության հավասար հնարավորությունների վրա:

Այս խնդիրների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային առաջատար երկրներում ընդունված են համակարգված, բազմաչափ և ժամանակակից մեթոդների կիրառում, ներառելով ֆիզիկական, հոգեբանական և սոցիալ-տնտեսական բաղադրիչների համալիր վերլուծություն, ինչը թույլ է տալիս մշակել արդյունավետ ընտրության ռազմավարություններ [11,13]:

Հ. Ջիլավյանի, Ա. Շախյանի, Ք. Բաղդասարյանի, Ա. Պողոսյանի և Հ. Գասպարյանի հետազոտությունները ներկայացնում են սպորտային ընտրության մեթոդաբանական որոշ մոտեցումներ Հայաստանի պայմաններում, սակայն դրանց գիտական արդյունքները դեռևս լիարժեք արտացոլում չեն գտել մարզիչների ժամանակակից գործնական գործունեությունում

Աղյուսակ 2

Հայաստանի և միջազգային երկրների սպորտային ընտրության համակարգերի համեմատական վերլուծություն

Ցուցանիշ	Հայաստան	Միջազգային փորձ (Գերմանիա, Բելգիա Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ)
Կենտրոնացված ռազմավարության առկայություն	Բացակայում է	40-60% Որոշ երկրներում մասամբ կա
Գիտական թեստավորման կիրառություն	20-30% Սահմանափակ է	80-95% Ընդհանրապես կիրառվում է
Մասնագետների վերապատրաստման մակարդակ	25-35% Փոքրաթիվ է	75-90% Հիմնականում լավ կազմակերպված է
Ֆինանսավորման ծավալ	10-15% Բացարձակ ցածր	70-90% Զարգացած երկրներում բարձր
Տեխնոլոգիական գործիքների կիրառություն	10-20% Քիչ տարածված է	85-95% Շատ տարածված է
Սոցիալ-տնտեսական հավասարություն	40-50% Անհավասար է	70-85% Շատ երկրներում կան հավասարեցման քայլեր

Ինչպես երևում է 2-րդ աղյուսակից Հայաստանում միասնական և համակարգված ռազմավարության բացակայությունը հանգեցնում է ընտրության գործընթացների անհամաչափության՝ մարզաձևերի, մարզադպրոցների և մարզիչների միջև, ինչը նվազեցնում է համակարգի ընդհանուր արդյունավետությունը և բարդացնում տաղանդավոր մարզիկների համալիր և օբյեկտիվ բացահայտումը [14]:

Մինչդեռ զարգացած երկրներում համակարգված ռազմավարությունը ապահովում է համապարփակ մոտեցում, որը հեշտացնում է ռեսուրսների համատեղումը, փորձի փոխանակումը և միասնական չափանիշների կիրառումը: Ամերիկյան ու Եվրոպայի երկրների փորձը վկայում են, որ ռազմավարության կենտրոնացումը՝ օպտիմալացնելով ընտրության գործընթացը, զգալիո-

րեն բարձրացնում է մարզիկների պատրաստության մակարդակը և մրցունակությունը [13]:

Հայաստանում գիտական թեստավորման սահմանափակ կիրառումը հիմնականում հանգեցնում է ընտրության սուբյեկտիվության՝ հիմնված մարզչական փորձի վրա: Մինչդեռ առաջատար երկրներում կիրառվում են բազմաչափ գիտական մոտեցումներ՝ ներառյալ թեստավորում, ֆիզիոլոգիական ցուցանիշների գնահատում և հոգեբանական վերլուծություններ: Վերլուծությունները, որոնց արդյունքները ներկայացված են Lewis & Carter (2022) և Walker (2018) հետազոտություններում, ցույց են տալիս, որ գիտական թեստավորումը զգալիորեն բարելավում է մարզիկների ընտրության գործընթացը և նպաստում է մարզական կարիերայի կայուն զարգացմանը՝ նվազեցնելով վաղ շրջանում տաղանդների չբացահայտումը [11,14]:

Մարզիչների և ընտրության մասնագետների վերապատրաստման պակասը՝ ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման խոչընդոտ է, ինչը նվազեցնում է միջազգային փորձի ներմուծման և նորարարությունների ներդրման հնարավորությունները: Ավելի զարգացած երկրներում մարզիչներն ու մասնագետները կանոնավոր վերապատրաստվում են՝ ներմուծելով նոր մեթոդաբանություններ և տեխնոլոգիաներ, ինչն նպաստում է ընտրության գործընթացի որակի բարձրացմանը և համակարգի շարունակական կատարելագործմանը [13]:

Ֆինանսավորման ցածր մակարդակը խոչընդոտում է թեստավորման, տեխնոլոգիաների ներդրման և վերապատրաստումների կազմակերպմանը: Զարգացած երկրներում ֆինանսավորումը թույլ է տալիս ստեղծել ամբողջական և արդիական ընտրության համակարգեր՝ ներառյալ վերջին տեխնոլոգիաներն ու մասնագետների լայն թիմերը: Ֆինանսավորման որակը անմիջականորեն ազդում է ընտրության արդյունավետության վրա, իսկ ներդրումները սպորտային ապագայի ապահովման կարևոր գործոն են [1]:

Տեխնոլոգիաների և տվյալագիտության տարածվածության պակասը սահմանափակում է մարզիկների ընտրության հնարավորությունները և տվյալների բազմակողմանի վերլուծությունը: Արհեստական ինտելեկտը, սենսորային տեխնոլոգիաները և մեծ տվյալների վերլուծությունը հզոր գործիքներ են մարզիկների պոտենցիալը ճշգրիտ գնահատելու համար: Տեխնոլոգիական առաջընթացը միջազգային մրցունակության կարևոր գործոն է և

անհրաժեշտ է ինտեգրվել նաև հայաստանյան համակարգում [12]:

Սոցիալ-տնտեսական անհավասարությունը խոչընդոտում է մարզիկների հավասար հնարավորություններին, քանի որ որոշ մարզադպրոցներ գտնվում են հեռավոր վայրերում, մարզիչների և մարզական ենթակառուցվածքի հասանելիությունը սահմանափակ է, և ֆինանսական միջոցները մարզիկների համար անբավարար են: Շատ երկրներում կիրառվում են քաղաքականություններ, որոնք ապահովում են մարզիկների հավասար հնարավորությունները՝ անկախ սոցիալական կամ տնտեսական խոչընդոտներից. դա հնարավորություն է տալիս ավելացնել տաղանդավոր մարզիկների ընդհանուր թիվը և բարելավել սպորտային արդյունքները [13]:

Աղյուսակ 3

Տաղանդների հայտնաբերման գործիքակազմի կիրառման մակարդակ

Մեթոդ	Գերմանիա	Մեծ Բրիտանիա	Նիդեռլանդներ	Հայաստան
Ֆիզիկական թեստավորում	90%	85%	88%	40%
Հոգեբանական թեստավորում	70%	65%	72%	10%
Ֆիզիոլոգիական գնահատում	60%	55%	58%	5%
Տվյալագիտություն և AI	40%	35%	45%	0%

3-րդ աղյուսակը ցույց է տալիս, որ Հայաստանում սպորտային ընտրության գործընթացում հիմնականում կիրառվում է ֆիզիկական թեստավորում, մինչդեռ հոգեբանական, ֆիզիոլոգիական և տեխնոլոգիական (տվյալագիտություն և AI) մեթոդների կիրառումը անչափ սահմանափակ է, ինչը նվազեցնում է բազմաչափությունն ու արդյունավետությունը և խոչընդոտում մարզիկների պոտենցիալի ամբողջական և օբյեկտիվ գնահատմանը [5,11,14]:

Այնուհանդերձ, ընտրության արդյունավետությունն ավելի լավ հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել նաև ընտրության սխալների տեսակներն ու դրանց ազդեցությունը, որոնք ներկայացված են 4-րդ աղյուսակում: Այս վերլուծությունը կօգնի բացահայտել

ընտրության գործընթացում առկա մարտահրավերները և ուղղություններ՝ համալիր բարեփոխումների համար»:

Հաշվի առնելով գործիքակազմի կիրառման մակարդակը՝ կարևոր է ընդգծել ընտրության գործընթացում հանդիպող հիմնական սխալները, որոնք զգալի ազդեցություն են ունենում մարզիկների զարգացման վրա: Աղյուսակ 4-ում ներկայացված են սպորտային ընտրության սխալների հիմնական տեսակները՝ վաղ ընտրություն, մարզչական ուշադրության պակաս և ուշ ընտրություն, ինչպես նաև դրանց ազդեցությունը մարզիկների վրա և համեմատական միջազգային դիտարկումներ: Այս սխալները հանգեցնում են տաղանդավոր մարզիկների ֆիզիկական և հոգեբանական պոտենցիալի կորստի, մոտիվացիայի անկման և մարզչական ռեսուրսների ոչ օպտիմալ բաշխման: Այս հանգամանքները խոչընդոտում են ընտրության համակարգի արդյունավետ գործարկմանը և նվազեցնում տաղանդավոր մարզիկների համալիր և օբյեկտիվ բացահայտման հնարավորությունները [5,11,14]:

Աղյուսակ 4

Ընտրության սխալների տեսակներն ու դրանց ազդեցությունը

Սխալի տեսակ	**Նկարագրություն**	**Պատճառած ազդեցությունը մարզիկների վրա**	**Համեմատական միջազգային դիտարկումներ**
Վաղ ընտրություն	Տաղանդավոր մարզիկների վաղ հեռացում	Տաղանդների կորուստ	Հաճախ հանդիպում է զարգացող երկրներում
Մարզչական վարպետության պակաս	Մարզչական հսկողության և աջակցման պակաս	Մոտիվացիայի անկում, անկայունություն	Առկա է բոլոր մակարդակներում
Ուշ ընտրություն	Տաղանդների ուշ հայտնաբերում	Պոտենցիալի բաց թողում	Կարող է նպաստել ուշ զարգացող մարզիկների զարգացմանը

Մեզ հասած գրական աղբյուրներից երևում է, որ սպորտային ընտրության գործընթացում հաճախ կրկնվում են որոշ սխալներ, որոնք պետք է հաշվի առնել հետագա բարեփոխումների ժամանակ: Այս հիմքի վրա ընտրության համակարգի կազմակերպումը պետք է հիմնված լինի բազմաբնույթ, համապարփակ և գիտական մոտեցումների

վրա, ներառելով ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և տեխնոլոգիական գործոններ՝ ապահովելու օբյեկտիվ, ճկուն և կայուն ընտրության մեխանիզմներ [4,7]:

Ընտրության գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև ֆինանսական ռեսուրսներով, որոնք ապահովում են գիտական թեստավորումների, տեխնոլոգիական լուծումների և մասնագետների վերապատրաստման հնարավորությունը: 5-րդ աղյուսակում ներկայացված է տարբեր երկրների տարեկան բյուջեն՝ մարզիկների ընտրության ծրագրերի համար և ծախսերի հիմնական ուղղությունները:

Աղյուսակ 5

Ֆինանսավորման մակարդակը մարզիկների ընտրության ծրագրերում

Երկիր	Տարվա բյուջե (հազ. $)	Ծախսերի հիմնական ուղղություններ
Գերմանիա	5,000	Թեստավորում, վերապատրաստում, տեխնոլոգիա
Նիդեռլանդներ	4,200	Նորարարական տեխնոլոգիաների ներդրում
Մեծ Բրիտանիա	4,800	Հոգեբանական ծառայություններ, տվյալագիտություն
Հայաստան	250	Սահմանափակ, հիմնականում օժանդակ միջոցներ

Ինչպես երևում է 5-րդ աղյուսակից, Հայաստանում ֆինանսավորումը զգալիորեն ցածր է՝ համեմատած առաջադեմ երկրների հետ, ինչը խոչընդոտում է ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմանը [1]: Ներկայացված տվյալները վկայում են, որ Հայաստանի սպորտային ընտրության համակարգում առկա են լուրջ խնդիրներ, որոնք պայմանավորված են ոչ միայն մեթոդների և տեխնոլոգիաների սահմանափակ կիրառմամբ, այլև ֆինանսավորման և մասնագիտական պատրաստվածության պակասով: Այս հանգամանքները իրենց ազդեցությունն են ունենում նաև ընտրության սխալների հաճախականության և տաղանդավոր մարզիկների կորուստների վրա:

Այս իրողությունները պահանջում են համալիր բարեփոխումներ՝ ներառելով գիտական մեթոդների ներդրում, տեխնոլոգիական արդիականացում,

մարզիչների շարունակական վերապատրաստում և ֆինանսական հզորացում՝ ազգային և միջազգային մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

Եզրակացություն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում սպորտային ընտրության համակարգը դեռևս ենթակա է զարգացման և բարեփոխման՝ հատկապես միջազգային չափանիշների և լավագույն փորձերի կիրառման տեսանկյունից: Հետազոտության ընթացքում հայտնաբերվեցին հիմնական բացթողումները, որոնք վերաբերում են ֆիզիկական թեստավորման, հոգեբանական գնահատման, մարզիչների վերապատրաստման և ֆինանսավորման ոլորտներին: Մեկնաբանվել են նաև սոցիալ-տնտեսական անխափանության և մարզական ենթակառուցվածքների անհամաչափության խնդիրները, որոնք խոչընդոտում են հավասար հնարավորությունների տրամադրմանը երիտասարդ մարզիկների համար:

Այս իրողությունները պահանջում են համալիր բարեփոխումներ՝ ներառելով գիտական մեթոդների ներդրում, տեխնոլոգիական արդիականացում, մարզիչների շարունակական վերապատրաստում և ֆինանսական հզորացում՝ ազգային և միջազգային մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Ընդհանուր առմամբ, արդյունքները փաստում են, որ միայն համապարփակ մոտեցումն է համատեղում գիտական, կրթական և կառավարչական գործոնները, որը կարող է ապահովել համակարգի արդյունավետ և երկարաժամկետ զարգացում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Լ., Սպորտի կառավարում, Ուսումնական ձեռնարկ, Եր*ևան,* Էդիթ Պրինտ, 2024, 244 էջ:

2. Ղազարյան Ֆ.Գ., Սպորտային ընտրության և կողմնորոշման տեսական և գործնական ասպեկտները, Մեթոդական նամակ, Երևանի պետական համալսարանի ,,Ռոտոպրինտ,, տպագրական արտադրամաս, Երևան, 1976, էջ 5:

3. Быков Н.Н., Пути совершенствования спортивного отбора для занятий профессиональным спортом /Н.Н. Быков, Е.А. Денисов // Информатизация в цифровой экономике.- 2021.-Т. 2, №2.- С. 71-78.-DOI 10.18334/ide.2.2.113384,

4. Платонов В. Н. (2004) Система подготовки спортсменов в олимпийском спорте. Киев: Олимпийская литература. ст. 45

5. *Харре Д.* Учение о тренировке /*Д. Харре.*- М.: Физкультура и спорт.- Berlin: Sportverlag, *1982.*- 231 s. 32.

6. Abrahamyan A., & Petrosyan S. (2023). *Sports development management in the Republic of Armenia.* International Journal of Sports Science & Physical Education, 8(2), 45–52. https://doi.org/10.11648/j.ijsspe.20230802.12 [մուտք՝ 05.06.2025]

7. Bompa T.O. (2009). *Theory and methodology of training: The key to athletic performance.* Kendall Hunt. 123-125

8. Kim H., & Park J. (2020). *Psychological and social factors in talent identification in sports.* Journal of Applied Sports Psychology, 32(4), 321-335. https://doi.org/10.1080/10413200.2020.1716015 [մուտք՝ 12.07.2025]

9. Lopez M., Garcia A., & Torres P. (2022). *Genomics in sports: Applications for performance optimization and injury prevention.* Sports Medicine and Science, 56(5), 721-734. https://doi.org/10.1007/s40279-022-01678-4 [մուտք՝ 18.07.2025]

10.Smith J., & Jones L. (2021). *Artificial intelligence in athlete selection: Big data approaches.* International Journal of Sports Science & Coaching, 16(3), 560-573. https://doi.org/10.1177/1747954120986765 [մուտք՝ 22.07.2025]

11. Vaeyens R., Lenoir M., Williams A.M., & Philippaerts R.M. (2009). Talent identification and development programmes in sport. *Sports Medicine*, 39(9), 703-714. https://doi.org/10.2165/11317780-000000000-00000 [մուտք՝ 01.08.2025]

12. Vaeyens R., Lenoir M., Williams A.M., & Philippaerts R.M. (2019). *Talent identification and development programmes in sport: Current models and future directions.* Sports Medicine, 39(9), 703-714. https://doi.org/10.2165/00007256-200939090-00001 [մուտք՝ 03.08.2025]

13. Williams A.M., & Reilly T. (2000). Talent identification and development in soccer. *Journal of Sports Sciences*, 18(9), 657-667. https://doi.org/10.1080/02640410050120041 [մուտք՝ 06.08.2025]

14. https://www.researchgate.net/publication/365719135_COMPARATIVE_ANALYSIS_OF_SPORT_SELECTION_SYSTEMS_IN_DIFFERENT_COUNTRIES [-մուտք՝ 04.08.2025]

PROBLEMS OF SELECTION IN SPORTS: GENESIS, CURRENT STATE, PROSPECTS

A.V. Poghosyan,
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRSACT

Keywords: Sports selection, talent identification, athlete selection, modern approaches, genesis, issues in sports.

Research relevance: Effective and objective sports selection is the basis for training elite athletes and a key component of sports policy. Modern selection considers not only physical indicators but also psychological, socio-cultural, motivational, and genetic factors. This requires a comprehensive, scientific approach with modern technologies and tools, ensuring fairness and accuracy in identifying talent. In Armenia, despite qualified coaches and rich sports traditions, there are no unified standardized programs, which limits talent identification, reduces competitiveness internationally, and slows the overall development of promising athletes.

Research aim: To study the genesis of sports selection problems, assess the current state, and determine development prospects in Armenia and abroad.

Research methods and organization. Literature review, comparative and statistical analysis were applied in three stages:

1. Theoretical - collection, systematization, and study of Armenian and international materials.

2. Analytical - comparison of data, identification of problems and opportunities.

3. Concluding - formulation of conclusions and practical recommendations.

Research results analysis. In Armenia, athlete selection often relies on subjective assessment and limited scientific methods, causing loss of talent. Leading sports nations use multidimensional, innovative approaches integrating technology, scientific testing, and long-term planning.

Conclusion. The sports selection system in Armenia requires further development and reform in line with international standards. Key gaps have been identified in

physical testing, psychological assessment, coach training, and funding. Socio-economic disparities and imbalances in sports infrastructure limit equal opportunities for young athletes. Comprehensive reforms, including the implementation of scientific methods, technological upgrades, and continuous coach education, are necessary to ensure the system's effective and long-term development.

ПРОБЛЕМЫ ОТБОРА В СПОРТЕ: ГЕНЕЗИС, СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ, ПЕРЕСПЕКТИВЫ

А.В. Погосян,
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: **С**портивный отбор, выявление талантов, селекция спортсменов, современные подходы, генезис, проблемы в спорте.

Актуальность исследования. Эффективный и объективный спортивный отбор основа подготовки высококлассных спортсменов и важный элемент спортивной политики. В современном спорте учитываются не только физические данные, но и психологические, социально-культурные, мотивационные и генетические факторы. Это требует комплексного, научно обоснованного подхода, применения современных технологий и инструментов. В Армении, несмотря на наличие квалифицированных тренеров и богатых спортивных традиций, отсутствуют единые стандартизированные программы отбора, что ограничивает возможности выявления перспективных спортсменов и снижает конкурентоспособность на международной арене. Дополнительное внимание к ранней селекции и индивидуальному сопровождению спортсменов могло бы существенно повысить качество подготовки.

Цель исследования. Изучить генезис проблем спортивного отбора, оценить современное состояние и определить перспективы развития системы в Армении и за рубежом.

Методы и организация исследования. Использованы анализ научной и методической литературы, сравнительный и статистический анализ. Работа проведена в три этапа:

1. Теоретический - сбор, систематизация и изучение армянских и международных материалов.

2. Аналитический - сопоставление данных, сравнительный анализ опыта Армении и других стран, выявление ключевых проблем и возможностей.

3. Заключительный - формулировка выводов и рекомендаций по совершенствованию системы отбора.

Анализ результатов исследования. Установлено, что в Армении отбор спортсменов часто опирается на субъективную оценку и фрагментарное использование научных методов, что приводит к упущению талантов. Ведущие спортивные державы применяют многомерные, инновационные подходы, интегрирующие технологии и долгосрочное планирование.

Краткие выводы. Система спортивного отбора в Армении требует дальнейшего развития и реформ с учётом международных стандартов. Выявлены основные пробелы в физическом тестировании, психологической оценке, подготовке тренеров и финансировании. Социально-экономическая неравномерность и дисбаланс спортивной инфраструктуры ограничивают равные возможности для молодых спортсменов. Комплексные реформы с внедрением научных методов, технологическим обновлением и повышением квалификации тренеров необходимы для эффективного и долгосрочного развития системы.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աննա Վոլոդիայի Պողոսյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: anna.poghosyan@sportedu.am

Information about the author

Anna Volodya Poghosyan, PhD, Associate Professor of the Chair of Theory, Methodology and Adaptive Physical Culture and Sport, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

Email: anna.poghosyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 13.08.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 15.08.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյան